ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ
ОО ФОНД ПРОТИВ ПРАВОВОГО ПРОИЗВОЛА
FOUNDATION AGAINST VIOLATION OF LAW NGO
Հայաստան, 0023 Երևան, Արշակունյաց 6, հեռ.՝ (374 10) 582819, ֆաքս՝ (374 10) 58 28 19
է-փոստ՝ info@favl.am, կայք՝ www.favl.am

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, «Ձերբակալված և Կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում, «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքներում, ՀՀ Կառավարության 03.08.06թ. հա.1543-ն որոշման մեջ Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների և որոշման նախագծերի վերաբերյալ

1. Քրեակատարողական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 76-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխությունը ենթակա է վերաձևակերպման այն հաշվով, որ կրոնական համոզմունքներից ելնելով սննդի նորմայից հրաժարվող դատապարտյալը ունենա ոչ թե հավելյալ կամ դիետիկ սննդի իրավունք, այլ նախատեսված նորմային համապատասխան, իրկրոնական համոզմունքներով ընդունելի այլ սնունդ:

Այստեղ նաև ավելորդ է <<անվճար>> բառը, քանի որ դատապարտյալների սննունդն ապահովվում է պետության հաշվին>>:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> օրենքի 19-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությանը:

2. Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ տողերի ուժը կորցրած ճանաչելը վիճարկելի է: Դրանք վերաբերում են առանձնապես ծանր հանցագործությունների համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տեսակցությունների սահմանափակմանը: Առաջարկով նրանց այդ իրավունքը հավասարեցվում է մյուս դատապարտյալների իրավունքին:

3. Օրենսգրքի 115-րդ հոդվածի առաջրկվող խմբագրությամբ / հոդ 4/ սահմանվում է պատիժը կրելուց պայմանական վաղակետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման մանրամասն ընթացակարգ, ինչը ընդունելի է: Սակայն հոդվածի 8-րդ մասը հակասում է 12-րդ մասին, քանի որ ինքնուրույն դատարան դիմելն ինքնին նշանակում է անհամաձայնություն անկախ հանձնաժողովի որոշման հետ և դրա բողոքարկում: Մինչդեռ հոդվածի 12-րդ մասով անկախ հանձնաժողովի որոշման բողոքարկման իրավունքը սահմանափակված է:

Եթե նախատեսվելու լիներ անկախ հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իրավունք, ապա այդ իրավունքը պետք է վերապահվեր քրեակատարողական հիմնարկին կամ հիմնարկի հանձնաժողովին, նկատի ունենալով, որ դատապարտյալի ուղղված լինելը գնահատելը և ապացուցաելը վարչակազմի խնդիրն է:

Օրենսգրքի 115-րդ հոդվածով ամրագրված է և նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասով կրկնվում է, որ <<Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի վարչական հանձնաժողովը մեկամսյա ժամկետում լսում է **կարգապահական տույժ չունեցող** դատապարտյալներին---------- ներկայացման հարցը>>:

Մեր կարծիքով, պետք է հանել <<կարգապահական տույժ չունեցող>> բառերը, նկատի ունենալով, որ վարչական հանձնաժողովը պետք է գնահատական տա նաև դատապարտյալի

ստացած տույժերին և դրանք հաշվի չառնի, եթե դրանք իրենց բնույթով կարող են դասվել կարգապահական ձևական խախտումների շարքին:

Եթե Վարչական հանձնաժողովը կայացնելու է նաև որոշում վաղակետ ազատման վերաբերյալ միջնորդագիր չներկայացնելու մասին, ուրեմն նման որոշումները լինելու են հիմնականում խախտում ունեցող դատապարտյալների հարցերով:

Դատապարտյալը, ստանալով միջնորդագիր չներկայացնելու որոշում այն հիմնավորմամբ, որ նա ունի չվերացված տույժ, բնականաբար կձկտի դրսևորել այնպիսի վարքագիծ, որը պետք է հանգեցնի խրախուսման և տույժի վերացման:

4. Օրենսգրքի 40, 72, 77, 92 հոդվածներում առաջարկվող փոփոխությունների նախագծերը /նաև հավելվածները/ ընդունելի են:

Մյուս նախագծերն ընդունելի են այնքանով, որքանով չեն առնչվում սույն առարկություններին:

«Ընդդեմ Իրավական կամայականության»
հասարակական կազմակերպություն